**Ի գիտություն ընդունելության մրցույթի արդյունքներով հաշվեգրված դիմորդների**

Հարգելի՛ դիմորդներ, համաձայն Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցման 2023-2024 ուսումնական տարվա ընդունելության կարգի՝ ընդունելության մրցույթի արդյունքներով հաշվեգրված դիմորդները պետք է մինչև ս.թ. օգոստոսի 4-ը ԱրՊՀ ընդունող հանձնաժողովին ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. միջնակարգ կրթության ատեստատը կամ միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը),
2. 4 լուսանկար (3X4 սմ չափսի),
3. անձը հաստատող փաստաթուղթ, (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական), սոցիալական քարտ (պատճեն),
4. զինվորական գրքույկ և (կամ) զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինծառայությունն անցնելու մասին (արական սեռի ներկայացուցիչների համար),
5. սոցիալական վիճակը հաստատող տեղեկանք (առկայության դեպքում),
6. միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ (առկայության դեպքում),
7. տվյալ և նախորդ տարվա միասնական քննությունների վկայագիր (առկայության դեպքում),
8. փաստաթղթեր ընդունելու և ձևակերպելու համար 1500 ՀՀ դրամ /«Արցախբանկ» ՓԲԸ-ում ԱրՊՀ հաշվեհամարին/ վճարելու վերաբերյալ անդորրագիր,
9. 1արագակար:

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել

047-91-02-91 հեռախոսահամարով: